Կնքված պայմանագրի մասին հայտարարություն

Երևանի Մ. Գալշոյանի անվան թիվ 148 ավագ դպրոցի կառուցում
A-19EN

Ծրագրի անվանում՝ Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր
Երկիր՝ Հայաստան
Վարկի համար՝ 3284-ARM (ԱԶԲ), 4351-ARM
Շնորհված ընկերություն՝ «Ղարաբաղցյան Շին» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Գավառ, Նալբանդյան փողոց, տուն 110
Քաղաք/Մարզ՝ ք. Գավառ
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 5 սեպտեմբերի 2024թ.
Գնման ընթացակարգի եղանակ՝ «Ազգային մրցակցային մրցույթ»
Պայմանագրի գումար՝ 2,114,016,192.00 (երկու միլիարդ մեկ հարյուր տասնչորս միլիոն տասնվեց հազար մեկ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Տևողությունը՝ շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև ավարտը, նախատեսվում է՝ 780 *օր*

Պայմանագրի շրջանակը.
Նախատեսված է՝
Տարածքում նախագծով նախատեսվում է կառուցել հիմնական ուսումնական մասնաշենքեր, կաթսայատուն, հակահրդեհային ջրավազաններ, սպորտային հրապարակ: Նախագծվող դպրոցը նախատեսված է 1-9 դասարանների համար՝ 3 հոսքով /3:30/՝ ընդհանուր 27 դասարան՝ 648 աշակերտի համար: Հիմնական 27 դասարաններից բացի նախատեսված են բոլոր անհրաժեշտ մասնագիտական դասարաններն ու լաբորատորիաները: Նախատեսվող դպրոցը բաղկացած է 8 մասնաշենքերից, որոնք բաժանված են հակասեյսմիկ կայաններով:

Թիվ 1-ից թիվ 6 երկհարկանի մասնաշենքերը ներառում են դպրոցի ուսումնական, վարչական մասը սահանգույցներ հանգույցը եվ այլն: Թիվ 1 և թիվ 2 երկհարկանի մասնաշենքերը ներառում են մուտքային հանգույց վերելակով որոշ վարչական շենքեր և արհեստանոց:

Թիվ 3 և թիվ 4 երկհարկանի մասնաշենքերը ներառում են տարրական դասարանները և դրանց պատկանող մասնագիտական կաբինետները:

Թիվ 5 ու թիվ 6 երկհարկանի մասնաշենքերը ներառում են 5-9-րդ դասարանները և նրանց պատկանող մասնագիտական կաբինետները:

Թիվ 7 միահարկ մասնաշենքը ներառում է հանդիսությունների դահլիճին ու մարզադահլիճին անհրաժեշտ լրացուցիչ սենքեր:

Թիվ 8 մեծաթռիչք միահարկ մասնաշենքը ներառում է հանդիսությունների և մարզական դահլիճներ:

Տանիքները երկլանջեն՝ արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ մետաղական հիմնակմախքով տանիքում նախատեսված է տեղադրել ֆոտովոլտային համակարգ:

Բոլոր մասնաշենքերում նախատեսված են սակավաշարժ խմբի համար հատուկ միջոցառումներ՝ վերելակ սանհանգույցներ, թեքահարթակներ, երկրաբանական պայմաններից ելնելով բոլոր մասնաշենքերի 0,00 նիշից ցածր ընդունված են տուփաձեվ հիմքերը: կոնստրուկտիվ համակարգը՝ շրջանակակապային: